ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան և նպատակը

1. Սույն օրենքը կարգավորում է ընտանեկան բռնության ու դրա կանխարգելման հետ կապված հարաբերությունները, սահմանում է ընտանեկան բռնության հասկացությունը, ընտանեկան բռնությունից պաշտպանության և դրա կանխարգելման բնագավառում լիազոր մարմիններն ու նրանց լիազորությունները, ընտանեկան բռնության կանխարգելման հատուկ միջոցների տեսակները և կիրառման հիմքերը, դրանց կիրառման ժամանակ ընտանիքի անդամների իրավունքների պաշտպանությունը, ընտանեկան բռնության զոհի պաշտպանությունն ու աջակցությունը:

2. Սույն օրենքի նպատակն է ընտանեկան բռնության արդյունավետ կանխարգելումը և ընտանեկան բռնության զոհերի նպատակային պաշտպանությունն ու աջակցությունը:

Հոդված 2. Ընտանեկան բռնության մասին օրենսդրությունը

Ընտանեկան բռնությունից պաշտպանության և ընտանեկան բռնության կանխարգելման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, սույն օրենքով և իրավական այլ ակտերով:

Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են այդ նորմերը:

Հոդված 3. Օրենքի գործողությունը ժամանակի ընթացքում, տարածության մեջ և անձանց նկատմամբ

1. Սույն օրենսդրությունը հետադարձ ուժ չունի և կիրառվում է ուժի մեջ մտնելուց հետո ծագած հարաբերությունների նկատմամբ: Օրենքի գործողությունը մինչև դրա ուժի մեջ մտնելը ծագած հարաբերությունների վրա տարածվում է միայն ընտանեկան բռնության զոհերի պաշտպանության և աջակցության հարցերի վերաբերյալ:

2. Սույն օրենքի գործողությունը տարածվում է Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող բոլոր անձանց նկատմամբ՝ անկախ որևէ խտրականությունից և անկախ այն հանգամանքից, թե որտեղ է կատարվել ընտանեկան բռնության դեպքը:

Հոդված 4. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

Սույն օրենքի իմաստով օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

1. **ապաստարան՝** ընտանեկան բռնության զոհերին և (կամ) նրանց ընտանիքի անդամներին անվտանգ և համապատասխան անվտանգության համակարգով համալրված ժամանակավոր կացարան, որտեղ նաև անհատույց տրամադրվում է սնունդ, հագուստ, սոցիալական աջակցություն, հոգեբանական խորհրդատվություն, իրավաբանական խորհրդատվություն ու օգնություն, բժշկական օգնություն և սպասարկում, իսկ երեխաներին՝ նաև կրթության հնարավորություն,

2. **բռնարար՝** անձ, ով զոհի հանդեպ կատարել է ընտանեկան բռնություն,

3. **ընտանեկան բռնության զոհ՝** անձ, ով տուժել է բռնարարի կողմից գործադրված ընտանեկան բռնությունից,

4. **ընտանիքի անդամներ՝**

1) քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում գրանցված ամուսնության մեջ գտնվող անձինք, այդ թվում՝ եթե համատեղ չեն բնակվում,

2) քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում չգրանցված ամուսնության մեջ գտնվող անձինք (փաստացի ամուսնություն) և զուգընկերները (զուգընկեր է համարվում այն անձը, ով պարբերաբար սեռական հարաբերություններ է ունեցել միևնույն անձի հետ),

3) անձինք, ովքեր նախկինում հանդիսացել են ամուսիններ, փաստացի ամուսիններ կամ զուգընկերներ,

4) անձինք, ովքեր օրենքով սահմանված կարգով իրականացնում են խնամատար ընտանիքի գործառույթներ և նրանց ընտանիքի անդամները,

5) ծնողները, զավակները, որդեգրողները, որդեգրվածները, հարազատ և ոչ հարազատ (համամայր կամ համահայր) քույրերը և եղբայրները, տատերը, պապերը, թոռները,

6) ամուսիններից (զուգընկերներից) յուրաքանչյուրի ծնողները, որդեգրողները, զավակները, որդեգրվածները, հարազատ քույրերը և եղբայրները, տատերը, պապերը, թոռները,

7) ամուսիններից (զուգընկերներից) մեկի հետ ազգակցական այլ կապի մեջ գտնվող և մինչև նախապապը կամ նախատատն ընդհանուր նախնիներ ունեցող անձինք,

5. **ընտանեկան բռնություն՝** ընտանիքի անդամների միջև ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ տնտեսական բռնության կիրառում, մասնավորապես՝

1) ընտանիքի մեկ անդամի կողմից մյուսին ծեծի կամ խոշտանգման ենթարկելը, դիտավորությամբ կամ անզգուշությամբ առողջությանը վնաս կամ մահ պատճառելը,

2) ընտանիքի մեկ անդամի կողմից մյուսին դիտավորությամբ ֆիզիկական ցավ պատճառելը,

3) ընտանիքի մեկ անդամի կողմից մյուսին դիտավորությամբ հոգեկան տառապանք պատճառելը կամ հոգեբանական հարկադրանքի, այդ թվում՝ սպառնալիքների և հետապնդումների ենթարկելը,

4) երեխայի ներկայությամբ ընտանիքի մեկ անդամի կողմից մյուսի նկատմամբ նրա կամքին հակառակ դիտավորությամբ ցանկացած բռնության գործադրումը,

5) ընտանիքի մեկ անդամի կողմից մյուս անդամի կամքին հակառակ, վերջինիս կամ այլ անձի նկատմամբ բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով կամ անօգնական վիճակն օգտագործելով՝ նրա հետ սեռական հարաբերություն ունենալը կամ սեքսուալ բնույթի այլ գործողություններ կատարելը կամ դրանց կատարմանը հարկադրելը,

6) ընտանիքի մեկ անդամի կողմից ընտանիքի անդամ երեխայի հետ սեռական հարաբերություն ունենալը կամ սեքսուալ բնույթի այլ գործողություններ կատարելը,

7) ընտանիքի մեկ անդամի կողմից մյուսի հանդեպ անհարկի տնտեսական վերահսկողություն սահմանելու նպատակով վերջինիս կամքին հակառակ նրա գույքը դիտավորությամբ վերցնելը, ոչնչացնելը, վնասելը, յուրացնելը, վատնելը, օտարելը կամ թաքցնելը,

8) կենսական անհրաժեշտության պայմաններից, այդ թվում՝ սննդից, ջրից, դեղերից կամ դրանց ձեռք բերման համար անհրաժեշտ միջոցներից և/ կամ բժշկական օգնությունից դիտավորությամբ զրկելը, ինչպես նաև անձի ազատ տեղաշարժվելու իրավունքը սահմանափակելը,

6. **ընտանեկան բռնության կանխարգելումը՝** հատուկ միջոցների համակարգ, որն ուղղված է ընտանեկան բռնությանը նպաստող պատճառների և պայմանների վերացմանը, ընտանեկան բռնության կլ;անխմանն ու ընտանեկան բռնություն կատարած անձանց՝ օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվության ենթարկելուն,

7. **զոհերի աջակցությունը՝** ընտանեկան բռնության զոհերի բժշկական, հոգեբանական, սոցիալական օգնությունն ու վերականգնումն է,

8. **խորհրդատվական կենտրոն**՝ ընտանեկան բռնության զոհերին, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև նրանց ընտանիքի անդամներին համապատասխան սոցիալական աջակցություն, հոգեբանական խորհրդատվություն, իրավաբանական խորհրդատվություն և օգնություն, բժշկական օգնություն և սպասարկում տրամադրող կազմակերպություն,

9. **հաղորդում տված անձ**՝ անձ, ով ոստիկանության բնագավառի լիազոր մարմնի (այսուհետ՝ ոստիկանություն) համապատասխան բաժանմունք ընտանեկան բռնության կանխարգելման հատուկ միջոցի կիրառման կամ ընտանեկան բռնության առկայության մասին գրավոր կամ բանավոր հաղորդում է ներկայացրել,

10. **հոգեբանական աջակցության կենտրոն**՝ բռնարարին հոգեբանական օգնություն ցուցաբերող կազմակերպություն:

ԳԼՈՒԽ 2. ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅՈՒԹՅՈՒՆԻՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԵՎ ԱՅՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 5. Ընտանեկան բռնությունից պաշտպանություն իրականացնող և այն կանխարգելող մարմինները

1. Ընտանեկան բռնությունից պաշտպանություն իրականացնող և այն կանխարգելող մարմիններն են՝

1) Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, որը համակարգում է ընտանեկան բռնության կանխարգելման գործընթացը,

2) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը (այսուհետ՝ ոստիկանություն),

3) Հայաստանի Հանրապետության դատարանները,

4) Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունը,

5) Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը,

6) Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը,

7) տեղական ինքնակառավարման մարմինները՝ ի դեմս խնամակալության և հոգաբարձության մարմինների,

8) Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը,

9) ընտանեկան բռնության զոհերին աջակցություն ցույց տվող հատուկ կառույցները՝

ա. աջակցման և խորհրդատվական կենտրոնները (այսուհետ՝ խորհրդատվական կենտրոն),

բ. հոգեբանական աջակցության կենտրոնը,

գ. ընտանեկան բռնության զոհերի համար ստեղծված ապաստարանները (այսուհետ՝ ապաստարան):

2. Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց լիազորությունների շրջանակում, պարտավոր են աջակցել ընտանեկան բռնության կանխարգելմանն ու դրանից՝ անձանց պաշտպանությանը, ընտանեկան բռնության զոհերին և նրանց ընտանիքի անդամներին օգնության ցուցաբերմանն ուղղված միջոցառումների իրականացմանը:

3. Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները փոխադարձաբար ուղղորդում են ընտանեկան բռնության զոհերին և/կամ նրանց ընտանիքի անդամներին համապատասխան մարմիններ կամ կառույցներ՝ օգնություն և/կամ աջակցություն ստանալու նպատակով:

Հոդված 6. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության լիազորությունները

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունն իրականացնում է հետևյալ լիազորությունները՝

1) մշակում և իրականացնում է ընտանեկան բռնության դեմ պայքարի բնագավառում պետական միասնական քաղաքականությունը,

2) իրականացնում է ոստիկանությունից, պետական մարմիններից և տեղական ինքնակառավարման մարմիններից, հասարակական կազմակերպություններից ստացված, զանգվածային լրատվամիջոցներով, քաղաքացիների կողմից հաղորդված ընտանեկան բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառում «Անհատական տվյալների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և իրավական այլ ակտերի պահանջներին համապատասխան:

3) տրամադրում է խորհրդատվություն պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին, իրավաբանական և ֆիզիկական անձանց՝ ընտանեկան բռնության կանխարգելման և դրանից՝ անձանց պաշտպանության հարցերի վերաբերյալ,

4) ապահովում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, իրավաբանական և ֆիզիկական անձանց միջև համագործակցությունը՝ ընտանեկան բռնության կանխարգելման և դրանից՝ անձանց պաշտպանության հարցերի շուրջ,

5) իրականացնում է ընտանեկան բռնության վերաբերյալ ուսումնասիրություններ, ընտանեկան բռնության վերաբերյալ հանրության իրազեկմանն ուղղված միջոցառումներ,

6) վերահսկողություն է իրականացնում ընտանեկան բռնության զոհերին աջակցություն տրամադրող կազմակերպությունների նկատմամբ,

7) բացահայտում է այն պատճառները և պայմանները, որոնք նպաստում են ընտանեկան բռնության դրսևորմանն և իր լիազորությունների շրջանակում իրականացնում է դրանք վերացնելու միջոցառումներ,

8) ընտանեկան բռնության դեմ պայքարի բնագավառում իրականացնում է օրենքով նախատեսված այլ լիազորություններ:

Հոդված 7. Ոստիկանության լիազորությունները

1. Ընտանեկան բռնությունից պաշտպանության և դրա կանխարգելման բնագավառում ոստիկանությունն իրականացնում է հետևյալ լիազորությունները՝

1) օրենքով սահմանված լիազորությունների շրջանակում ընդունում և քննում է ընտանեկան բռնության մասին գրավոր և բանավոր հաղորդումները,

2) օրենսդրությամբ նախատեսված լիազորություններն իրականացնելիս ընտանեկան բռնության դեպք հայտնաբերելիս իրականացնում է սույն հոդվածով նախատեսված լիազորությունները,

3) պրոֆիլակտիկ հաշվառման է վերցնում բռնարարին և նրա հետ անցկացնում կանխարգելիչ ու բացատրական աշխատանքներ,

4) այցելում է այն ընտանիքներ, որոնց անդամները վերցված են պրոֆիլակտիկ հաշվառման, և նրանց հետ անցկացնում կանխարգելիչ աշխատանքներ,

5) սույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով՝ կիրառում է ընտանեկան բռնությունը կանխարգելող հատուկ միջոց,

6) վերահսկողություն է իրականացնում ընտանեկան բռնության կանխարգելման նպատակով կիրառված հատուկ միջոցների պահանջների կատարման նկատմամբ,

7) իրազեկում է ընտանեկան բռնության զոհերին կամ նրանց ընտանիքի անդամներին նրանց իրավունքների, ընտանեկան բռնությունից պաշտպանվելու համար նախատեսված հասանելի միջոցների և ծառայությունների մասին,

8) անհրաժեշտության դեպքում ընտանեկան բռնության զոհերին, նրանց երեխաներին և խնամքի տակ գտնվող անձանց՝ վերջիններիս համաձայնությամբ, ուղղորդում է ապաստարան,

9) ընտանեկան բռնության կանխարգելումն իրականացնելու նպատակով համագործակցում է սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված

մարմինների, ինչպես նաև պետական կառավարման և տեղական ինքնակառավարման այլ մարմինների, իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ,

10) ոստիկանության ծառայողների համար պարբերաբար անցկացնում է ընտանեկան բռնության զոհերի հետ ճիշտ շփման և իրազեկման վերաբերյալ վերապատրաստման դասընթացներ,

11) ընտանեկան բռնությունից պաշտպանություն իրականացնելու կամ այն կանխարգելելու նպատակով իրականացնում է օրենքով նախատեսված այլ լիազորություններ:

2. Ոստիկանությունը պարտավոր է արձագանքել ընտանեկան բռնության վերաբերյալ յուրաքանչյուր գրավոր կամ բանավոր հաղորդմանը: Ընտանեկան բռնության վերաբերյալ յուրաքանչյուր գրավոր կամ բանավոր հաղորդում հաշվառվում է ոստիկանության կողմից՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով:

3. Ոստիկանության համապատասխան ծառայողը ներկայացված գրավոր կամ բանավոր հաղորդմանն արձագանքում է անհապաղ և ներկայանում դեպքի վայր, եթե հաղորդում տվողը տեղեկացնում է, որ `

1) տեղի է ունենում ընտանեկան բռնություն,

2) տեղի է ունեցել ընտանեկան բռնություն,

3) խախտվել են ընտանեկան բռնությունը կանխարգելելու նպատակով կիրառված սույն օրենքով նախատեսված հատուկ միջոցների պահանջները:

Հոդված 8. Դատարանի լիազորությունները

Ընտանեկան բռնությունից պաշտպանության և դրա կանխարգելման բնագավառում դատարանն իրականացնում է հետևյալ լիազորությունները՝

1) քննում է պաշտպանական որոշման կիրառման մասին միջնորդությունը և որոշում կայացնում դրա տրամադրման մասին,

2) որոշում է կայացնում պաշտպանական որոշման կիրառման ժամկետը երկարաձգելու կամ դրա կիրառումը դադարեցնելու մասին,

3) քննության է առնում հատուկ միջոցների կիրառման հետ կապված բողոքները,

4) դատարանում գործի քննության ժամանակ ընտանեկան բռնության հանցավոր դեպքերի հայտնաբերման դեպքում, օրենքով սահմանված կարգով քրեական գործ հարուցելու միջնորդությամբ դիմում է դատախազություն,

5) ընտանեկան բռնությունից պաշտպանություն իրականացնելու կամ այն կանխարգելելու նպատակով իրականացնում է օրենքով նախատեսված այլ լիազորություններ:

Հոդված 9. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության լիազորությունները

Ընտանեկան բռնությունից պաշտպանության և դրա կանխարգելման բնագավառում Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունն իրականացնում է հետևյալ լիազորությունները՝

1) ուսումնական և ուսումնադաստիարակչական հաստատություններում իրականացնում է ընտանեկան բռնության և դրա կանխարգելման վերաբերյալ հանրությանն իրազեկելու միջոցառումներ,

2) պարբերաբար անցկացնում է ընտանեկան բռնությունը կանխարգելելու վերաբերյալ վերապատրաստման դասընթացներ ուսուցիչների համար,

3) ընտանեկան բռնությունից պաշտպանություն իրականացնելու կամ այն կանխարգելելու նպատակով իրականացնում է օրենքով նախատեսված այլ լիազորություններ:

Հոդված 10. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության լիազորությունները

Ընտանեկան բռնությունից պաշտպանության և դրա կանխարգելման բնագավառում Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունն իրականացնում է հետևյալ լիազորությունները՝

1) ապահովում է բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից բժշկական օգնության դիմած ընտանեկան բռնության զոհերին բժշկական օգնության տրամադրումը,

2) ընտանեկան բռնությունից պաշտպանություն իրականացնելու կամ այն կանխարգելելու նպատակով իրականացնում է օրենքով նախատեսված այլ լիազորություններ:

Հոդված 11. Խնամակալության և հոգաբարձության մարմինների լիազորությունները

Խնամակալության և հոգաբարձության մարմիններն իրականացնում են հետևյալ լիազորությունները՝

1) օրենսդրությամբ սահմանված կարգով ցուցաբերում են օգնություն (անհրաժեշտության դեպքում օգնությունը տրամադրվում է զոհի բնակության վայրում)՝

ա. ծնող(ներ) ունեցող և ընտանիքում ապրող ընտանեկան բռնության զոհ դարձած անչափահասներին,

բ. ծնողներ չունեցող և խնամակալների (հոգաբարձուների, որդեգրողների) կամ խնամատար ընտանիքում ապրող ընտանեկան բռնության զոհ դարձած անչափահասներին,

գ. դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված ընտանեկան բռնության զոհ դարձած անձանց:

2) օրենքով սահմանված կարգով իրավասու մարմիններում, այդ թվում՝ դատարաններում իրականացնում են ընտանեկան բռնության զոհ հանդիսացող անչափահասների, անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը,

3) ընտանեկան բռնությունից պաշտպանություն իրականացնելու կամ այն կանխարգելելու նպատակով իրականացնում է օրենքով նախատեսված այլ լիազորություններ:

Հոդված 12. Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը

Ընտանեկան բռնությունից պաշտպանության և դրա կանխարգելման բնագավառում Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակն իրականացնում է հետևյալ լիազորությունները՝

1) իրականացնում է ընտանեկան բռնության և դրա կանխարգելման վերաբերյալ հանրությանն իրազեկելու միջոցառումներ,

2) Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ դիմած անձանց մոտ վնասվածքների, հետքերի առկայության դեպքում ապահովում է բուժաշխատողների կողմից ոստիկանությանն իրազեկելու գործընթացը,

3) ընտանեկան բռնությունից պաշտպանություն իրականացնելու կամ այն կանխարգելելու նպատակով իրականացնում է օրենքով նախատեսված այլ լիազորություններ:

Հոդված 13. Խորհրդատվական կենտրոնը

1. Խորհրդատվական կենտրոնը՝ շահույթ ստանալու նպատակ չհետապնդող իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որն ունի մասնաճյուղեր Հայաստանի Հանրապետության մարզերում: Խորհրդատվական կենտրոնն օրենքով սահմանված կարգով ստեղծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կամ տեղական ինքնակառավարման մարմինների, ֆիզիկական անձանց կամ ոչ առևտրային կազմակերպությունների, այդ թվում՝ հասարակական կազմակերպությունների կողմից: Հայաստանի Հանրապետության կառավարությունն օրենքով սահմանված կարգով աջակցում է տեղական ինքնակառավարման

մարմիններին, ֆիզիկական անձանց կամ ոչ առևտրային կազմակերպություններին, այդ թվում՝ հասարակական կազմակերպություններին, խորհրդատվական կենտրոններ ստեղծելու և վերջիններիս գործունեությունն ապահովելու համար:

2. Խորհրդատվական կենտրոնը՝

1) կազմակերպում է ընտանեկան բռնության զոհերի ընդունելություն՝ անհատույց տրամադրելով նրանց անհրաժեշտ հոգեբանական և իրավաբանական խորհրդատվություն, ինչպես նաև սոցիալական օգնություն և (կամ) աջակցություն,

2) անհրաժեշտության դեպքում ընտանեկան բռնության զոհերին, ինչպես նաև նրանց երեխաներին և (կամ) խնամքի տակ գտնվող անձանց, վերջիններիս համաձայնությամբ տեղափոխում է ապաստարան,

3) ընտանեկան բռնության զոհերին իրենց մայրենի կամ հասկանալի այլ լեզվով տեղեկացնում է իրենց իրավունքների, ընտանեկան բռնությունից պաշտպանելու համար նախատեսված հասանելի միջոցների և ծառայությունների մասին,

4) ուսումնասիրում և ամփոփում է ընտանեկան բռնությունների կոնկրետ դեպքերի դրսևորման պատճառներն ու պայմանները,

5) ընտանեկան բռնությունը կանխարգելելու նպատակով՝ առանց ընտանեկան բռնության զոհերի անհատական տվյալները հրապարակելու, օրենքով սահմանված կարգով, տրամադրում է տեղեկատվություն,

6) ընտանեկան բռնությունը կանխարգելելու նպատակով համագործակցում է զանգվածային լրատվության միջոցների, պետական, հասարակական և միջազգային կազմակերպությունների, ֆիզիկական անձանց և այլ կազմակերպությունների հետ,

7) ընտանեկան բռնությունից պաշտպանություն իրականացնելու կամ այն կանխարգելելու նպատակով իրականացնում է օրենքով նախատեսված այլ լիազորություններ:

3. Խորհրդատվական կենտրոնը պարտավոր է հանրության համար հասանելի կերպով պարբերաբար հրապարակել կապի այն միջոցների ցանկը, ներառյալ՝ ընտանեկան բռնության զոհերի համար նախատեսված անվճար «Թեժ Գիծ» ծառայությունների հեռախոսահամարները, որոնց միջոցով ընտանեկան բռնության զոհերը, նրանց ընտանիքի անդամները կամ այլ անձինք կարող են անհապաղ կապվել խորհրդատվական կենտրոնի աշխատողի կամ կենտրոնի կողմից ներգրավված համապատասխան մասնագետի կամ կազմակերպության հետ և ստանալ համապատասխան անհատույց օգնություն:

Հոդված 14. Հոգեբանական աջակցության կենտրոնը

1. Հոգեբանական աջակցության կենտրոնը՝ շահույթ ստանալու նպատակ չհետապնդող իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային

կազմակերպություն է, որն ունի մասնաճյուղեր Հայաստանի Հանրապետության մարզերում: Հոգեբանական աջակցության կենտրոնն օրենքով սահմանված կարգով ստեղծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կամ տեղական ինքնակառավարման մարմինների, ֆիզիկական անձանց կամ ոչ առևտրային կազմակերպությունների, այդ թվում՝ հասարակական կազմակերպությունների կողմից:

2. Հոգեբանական աջակցության կենտրոնը՝

1) բռնարարի համաձայնությամբ նրան տրամադրում է հոգեբանական օգնություն,

2) ընտանեկան բռնությունից պաշտպանություն իրականացնելու կամ այն կանխարգելելու նպատակով իրականացնում է օրենքով նախատեսված այլ լիազորություններ:

Հոդված 15. Ապաստարանը

1. Ապաստարանը՝ շահույթ ստանալու նպատակ չհետապնդող իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որն ունի մասնաճյուղեր Հայաստանի Հանրապետության մարզերում: Ապաստարանն օրենքով սահմանված կարգով ստեղծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կամ տեղական ինքնակառավարման մարմնի, ֆիզիկական անձանց կամ ոչ առևտրային կազմակերպությունների, այդ թվում՝ հասարակական կազմակերպությունների կողմից: Հայաստանի Հանրապետության կառավարությունն օրենքով սահմանված կարգով աջակցություն է տրամադրում տեղական ինքնակառավարման մարմնին, ֆիզիկական անձանց կամ ոչ առևտրային կազմակերպություններին՝ ապաստարան ստեղծելու և վերջինիս գործունեությունն ապահովելու համար:

2. Ապաստարանը՝

1) ընտանեկան բռնության զոհերին, նրանց ընտանիքի անդամներին՝ իրենց համաձայնությամբ անհատույց ապահովում է բնակելի տարածքով՝ համալրված համապատասխան անվտանգության համակարգով,

2) ընտանեկան բռնության զոհերին, նրանց ընտանիքի անդամներին տրամադրում է անհատույց հոգեբանական խորհրդատվություն, իրավաբանական խորհրդատվություն և օգնություն, սոցիալական օգնություն և աջակցություն, բժշկական օգնություն և սպասարկում՝ անհրաժեշտության դեպքում ներգրավելով համապատասխան մասնագետների, ինչպես նաև ապահովում է սննդով և հագուստով, իսկ երեխաներին՝ նաև ուսման հնարավորությամբ,

3) անհրաժեշտության դեպքում ընտանեկան բռնության զոհին՝ վերջինիս համաձայնությամբ, ուղղորդում է ըստ նշանակության՝ համապատասխան բուժօգնություն ստանալու, վերականգնվելու կամ այլ օգնություն ստանալու համար,

4) ընտանեկան բռնությունը կանխարգելելու նպատակով՝ առանց ընտանեկան բռնության զոհերի անհատական տվյալները հրապարակելու, օրենքով սահմանված կարգով, տրամադրում է տեղեկատվություն,

5) ընտանեկան բռնությունից պաշտպանություն իրականացնելու կամ այն կանխարգելելու նպատակով իրականացնում է օրենքով նախատեսված այլ լիազորություններ:

3. Ապաստարանում գտնվելու ժամկետը որոշվում է ընտանեկան բռնության զոհին համապատասխան օգնություն ցույց տվող մասնագետների կողմից՝ հաշվի առնելով զոհի ցանկությունը, իր և իր ընտանիքի անդամների անվտանգության համար սպառնալիքների առկայությունը, նրա ինքնուրույն կամ այլ անձի հետ համատեղ բնակվելու հնարավորության հանգամանքը և այլ պայմաններ:

ԳԼՈՒԽ 3. ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՂ ՀԱՏՈՒԿ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Հոդված 16. Ընտանեկան բռնությունը կանխարգելող հատուկ միջոցների տեսակները

1. Ընտանեկան բռնությունը կանխարգելող հատուկ միջոցներն են՝

1) պաշտոնեական նախազգուշացումը,

2) արտակարգ միջամտության որոշումը,

3) պաշտպանական որոշումը:

2. Սույն հոդվածով նախատեսված հատուկ միջոցի կիրառման մասին կայացվում է պատճառաբանված որոշում:

3. Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված հատուկ միջոցների կիրառումը խոչընդոտ չի հանդիսանում օրենքով սահմանված կարգով բռնարարի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու համար:

Հոդված 17. Պաշտոնեական նախազգուշացում

1. Ընտանեկան բռնությունը կանխարգելելու նպատակով ոստիկանության ծառայողի կողմից բռնարարի նկատմամբ կարող է կիրառվել բռնության կիրառման անթույլատրելիության մասին պաշտոնեական նախազգուշացում:

2. Պաշտոնեական նախազգուշացումը կիրառվում է այն դեպքերում, երբ բռնարարի կողմից ընտանեկան բռնություն գործադրելը տեղի է ունեցել առաջին անգամ, բռնարարի կատարած արարքը հանցակազմ չի պարունակում և չկա արտակարգ միջամտության կամ պաշտպանական որոշման կիրառման հիմքեր:

3. Պաշտոնական նախազգուշացում կիրառելու մասին ոստիկանության ծառայողի պատճառաբանված որոշումը բռնարարին հանձնվում է առձեռն, իսկ դեպքի վայրում բռնարարի բացակայության դեպքում՝ պատվիրված նամակով նրան է ուղարկվում փոստով՝ վերջին հայտնի բնակության վայրի հասցեով: Բռնարարը, մինչ նրան որոշումը ներկայացնելը, պարտավոր չէ կատարել որոշման պահանջները: Բռնարարի կողմից բնակավայրը փոխելը վերջինիս չի ազատում որոշման պահանջները կատարելու պարտավորությունից:

4. Պաշտոնական նախազգուշացում ստանալու օրվանից մեկ տարվա ընթացքում բռնարարի կողմից ընտանեկան բռնություն կրկին դրսևորելու դեպքում, բռնարարի նկատմամբ կիրառվում է արտակարգ միջամտության կամ պաշտպանական որոշում:

Հոդված 18. Արտակարգ միջամտության որոշումը

1. Ընտանեկան բռնության զոհի, նրա ընտանքի անդամների կամ խնամքի տակ գտնվող անձի անվտանգությունն անհապաղ ապահովելու նպատակով ոստիկանության ծառայողի կողմից բռնարարի նկատմամբ կարող է կիրառվել արտակարգ միջամտության որոշում:

2. Արտակարգ միջամտության որոշումը պարտադիր է, եթե ոստիկանության ծառայողի գնահատմամբ բռնարարի վարքագիծը սպառնում է զոհի, նրա ընտանիքի անդամների կամ խնամքի տակ գտնվող անձի կյանքին, ազատությանը, սեռական ազատությանը կամ անձեռնմխելիությանը, ինչպես նաև կարող է հասցվել ծանր կամ միջին ծանրության վնաս զոհի կամ նրա ընտանիքի անդամի կամ խնամքի տակ գտնվող անձի առողջությանը:

3. Արտակարգ միջամտության որոշման գործողության ժամկետը չի կարող գերազանցել 72 ժամը: Ժամկետի հաշվարկման սկիզբ է համարվում արտակարգ միջամտության որոշման մասին բռնարարին ծանուցելու պահը:

4. Արտակարգ միջամտության որոշմամբ կիրառվում են հետևյալ սահմանափակումները, այն է՝

1) արգելել բռնարարին՝ հեռախոսային, նամակագրական կամ կապի այլ միջոցներով ուղղակի կամ միջնորդավորված հաղորդակցվել ընտանեկան բռնության զոհի, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև նրա երեխաների և (կամ) խնամքի տակ գտնվող անձանց հետ,

2) ընտանեկան բռնության զոհի գտնվելու վայրը բռնարարին անհայտ լինելու դեպքում արգելել վերջինիս՝ անձամբ կամ երրորդ անձի միջոցով տեղեկատվություն հավաքել ընտանեկան բռնության զոհի, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև նրա երեխաների և (կամ) խնամքի տակ գտնվող անձանց գտնվելու վայրի մասին,

3) արգելել բռնարարին՝ այցելել իր հետ համատեղ բնակելի տարածքում չբնակվող ընտանեկան բռնության զոհին, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև նրա երեխաներին կամ խնամքի տակ գտնվող անձանց՝ նրանց աշխատանքի, ուսման, հանգստի, բնակվելու կամ այլ վայրերում,

4) արգելել բռնարարին՝ 100 մետրից ավել հեռավորության վրա մոտենալ իր հետ համատեղ բնակելի տարածքում չբնակվող ընտանեկան բռնության զոհին, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև նրա երեխաներին և (կամ) խնամքի տակ գտնվող անձանց:

5. Եթե ընտանեկան բռնության զոհը 16 տարին չլրացած երեխա է և արտակարգ միջամտության որոշումը կիրառվում է նրա հետ համատեղ բնակվող միակ ծնողի կամ խնամակալի նկատմամբ, ընտանեկան բռնությունը կանխարգելելու նպատակով երեխան իր բնակության վայրից տեղափոխվում է ժամանակավոր խնամքի տակ:

6. Արտակարգ միջամտության որոշում կիրառելու մասին ոստիկանության ծառայողի կողմից կայացված պատճառաբանված որոշումը բռնարարին հանձնվում է առձեռն, իսկ դեպքի վայրում բռնարարի բացակայության դեպքում՝պատվիրված նամակով նրան է ուղարկվում փոստով: Բռնարարը՝ մինչև նրան որոշումը ներկայացնելը, պարտավոր չէ կատարել որոշման պահանջները: Բռնարարի կողմից բնակավայրը փոխելը վերջինիս չի ազատում որոշման պահանջները կատարելու պարտավորությունից:

7. Արտակարգ միջամտության որոշում կայացնող ոստիկանության ծառայողը որոշման պատճենը և համապատասխան արձանագրությունն անհապաղ ներկայացնում է դատարան, եթե գտնում է, որ բռնարարի նկատմամբ անհրաժեշտ է կիրառել պաշտպանական որոշում:

Արձանագրության մեջ ներկայացվում են նաև բռնարարի նկատմամբ պաշտպանական որոշում կայացնելու համար միջնորդություն ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ հիմքերն ու փաստարկները: Եթե բռնարարը խուսափում է արտակարգ միջամտության որոշման պահանջների կատարումից, ոստիկանության ծառայողն անհապաղ այդ մասին տեղեկացնում է դատարանին՝ անհրաժեշտության դեպքում կցելով համապատասխան փաստաթղթերը:

8. Սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքում արտակարգ միջամտության որոշում կայացնող ոստիկանության ծառայողը որոշման պատճեն և համապատասխան արձանագրությունն անհապաղ ներկայացնում է խնամակալության և հոգաբարձության մարմնին ու միաժամանակ Երեխաների ժամանակավոր տեղավորման շուրջօրյա հաստատություն: Երեխաների ժամանակավոր տեղավորման շուրջօրյա հաստատությունը որոշումը ստանալու պահից 24 ժամվա ընթացքում ժամանակավոր խնամքը կազմակերպելու համար անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում: Հաշվի առնելով երեխայի կարծիքը, հնարավորության դեպքում, նախընտրությունը տրվում է ոչ ինստիտուցիոնալ խնամքին:

Հոդված 19. Պաշտպանական որոշումը

1. Պաշտպանական որոշման կիրառման մասին միջնորդությունը քննում է դատարանը՝ ոստիկանության ծառայողից այն ստանալու պահից 24 ժամվա ընթացքում: Պաշտպանական որոշումը տրվում է, եթե տեղի է ունեցել հանցագործության հատկանիշներ պարունակող ընտանեկան բռնության դեպք և կիրառվող անհրաժեշտ սահմանափակումները պետք է ունենան տևական բնույթ:

2. Պաշտպանական որոշումը տրվում է մինչև վեց ամիս ժամկետով և անհրաժեշտության դեպքում կարող է դատարանի պատճառաբանված որոշմամբ երկարաձգվել մեկ անգամ՝ առավելագույնը մինչև վեց ամիս ժամկետով:

3. Պաշտպանական որոշմամբ պարտադիր կիրառվում են սույն օրենքի 18-րդ հոդվածի չորրորդ մասով նախատեսված սահմանափակումները:

4. Բռնարարի նկատմամբ պաշտպանական որոշում չի կիրառվում, եթե վերջինիս նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է կալանավորումը:

Հոդված 20. Ընտանեկան բռնություն կատարած անձին պրոֆիլակտիկ հաշվառման վերցնելը և հաշվառումից հանելը

1. Բռնարարը, ում հանդեպ կիրառվել է ընտանեկան բռնությունը կանխարգելող միջոց, ոստիկանության կողմից վերցվում է պրոֆիլակտիկ հաշվառման:

2. Ընտանեկան բռնություն կատարած անձը հանվում է պրոֆիլակտիկ հաշվառումից, եթե ընտանեկան բռնության վերջին արարքից հետո մեկ տարվա ընթացքում այն չի կրկնվել:

3. Սույն հոդվածով նախատեսված պրոֆիլակտիկ հաշվառման վերցնելու և հաշվառումից հանելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության Կառավարությունը:

Հոդված 21. Անչափահաս անձի նկատմամբ հատուկ միջոցներ չկիրառելը

Անչափահաս անձի նկատմամբ արտակարգ միջամտության որոշում կամ պաշտպանական որոշում չի կիրառվում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ անչափահասը հասել է կատարված հանցագործության համար՝ ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված քրեական պատասխանատվության տարիքի:

ԳԼՈՒԽ 4. ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՂ ՀԱՏՈՒԿ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ, ԿԻՐԱՌՄԱՆ ԵՎ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Հոդված 22. Ընտանեկան բռնությունը կանխարգելող հատուկ միջոցների ընդունման և կիրառման հիմքերը

1. Ընտանեկան բռնությունը կանխարգելող հատուկ միջոցների ընդունման և կիրառման հիմքերն են՝

1) ընտանեկան բռնության մասին ընտանեկան բռնության զոհի գրավոր կամ բանավոր հաղորդումը,

2) ընտանեկան բռնության մասին իրավաբանական կամ ֆիզիկական այլ անձի կողմից ներկայացված գրավոր կամ բանավոր հաղորդումը,

3) հանցագործության հատկանիշներ պարունակող ընտանեկան բռնության դեպքերի մասին զանգվածային լրատվության միջոցների հաղորդումները,

4) ոստիկանության ծառայողների կողմից իրենց լիազորությունների իրականացման ընթացքում՝ հանցագործության հատկանիշներ պարունակող ընտանեկան բռնության դեպքերի հայտնաբերումը:

2. Ընտանեկան բռնության մասին գրավոր կամ բանավոր հաղորդումը ներկայացվում է սույն օրենքի 5-րդ հոդվածի առաջին մասի երկրորդ կետով նախատեսված մարմնին:

3. Իրավասու մարմինը, ում ներկայացվել է ընտանեկան բռնության մասին գրավոր կամ բանավոր հաղորդումը, քննության է առնում այն և անհրաժեշտ հիմքերի ու պայմանների առկայության դեպքում, իր լիազորությունների սահմաններում ընդունում և կիրառում է սույն օրենքով նախատեսված ընտանեկան բռնությունը կանխարգելող հատուկ միջոցներ:

Հոդված 23. Ընտանեկան բռնությունը կանխարգելող հատուկ միջոցների կիրառումը

1. Ընտանեկան բռնությունը կանխարգելող հատուկ միջոցները կիրառում են սույն օրենքի 6-րդ հոդվածի առաջին մասի երկրորդ և երրորդ կետերով նախատեսված մարմինները՝ ընդունելով համապատասխան պատճառաբանված որոշում:

2. Բռնարարի կողմից արտակարգ միջամտության որոշման կամ պաշտպանական որոշման պահանջների կատարումը վերահսկվում է սույն օրենքի 5-րդ հոդվածի առաջին մասի երկրորդ կետով նախատեսված մարմնի ներկայացուցչի կողմից:

3. Ընտանեկան բռնության մասին գրավոր կամ բանավոր հաղորդումը ոստիկանության ծառայողը քննության է առնում անհապաղ և ոստիկանության երկու ծառայողների կողմից (յուրաքանչյուր սեռի ծառայողներից մեկական ներկայացուցիչ) դեպքի վայր այցելելուց հետո տեղում որոշում է կայացվում ընտանեկան բռնության կիրառման անթույլատրելիության պաշտոնական նախազգուշացման կամ արտակարգ միջամտության որոշման կիրառման կամ դրանից զերծ մնալու մասին:

4. Իրավասու մարմնի որոշումը 24 ժամվա ընթացքում հանձնվում է առձեռն ընտանեկան բռնության զոհին կամ նրա ներկայացուցչին և բռնարարին կամ նրա ներկայացուցչին՝ հանձնման մասին ծանուցմամբ, իսկ առձեռն հանձնելու անհնարինության դեպքում՝ ուղարկվում է փոստով՝ պատվիրված նամակով՝ վերջին հայտնի բնակության վայրի հասցեով:

Հոդված 24. Ընտանեկան բռնությունը կանխարգելող հատուկ միջոցների կիրառումը մերժելու կամ դադարեցնելու մասին որոշումը

Ընտանեկան բռնությունը կանխարգելող հատուկ միջոցների կիրառումը մերժելը կամ դադարեցնելն իրականացվում է պատճառաբանված որոշմամբ, որում պետք է ներառվեն դրա կայացման հիմքերը և պատճառները, ինչպես նաև բողոքարկման կարգն ու ժամկետները:

Հոդված 25. Ընտանեկան բռնությունը կանխարգելող հատուկ միջոցների կիրառումը մերժելու կամ չկիրառելու հիմքերը

1. Ընտանեկան բռնությունը կանխարգելող հատուկ միջոցների կիրառումը մերժվում է, եթե՝

1) բռնարարի կողմից կատարված արարքը չի համապատասխանում սույն օրենքով նախատեսված՝ ընտանեկան բռնության սահմանման հատկանիշներին,

2) օրենքով սահմանված դեպքերում բացակայում է ընտանեկան բռնության զոհի գրավոր կամ բանավոր հաղորդումը,

3) ներկայացված դիմումից կամ հաղորդումից հնարավոր չէ եզրակացնել սույն օրենքով սահմանված ընտանեկան բռնության մասին,

4) ընտանեկան բռնության զոհը ներկայացրել է դիմում բռնարարի նկատմամբ հատուկ միջոցներ չկիրառելու մասին՝ այն պայմանով, որ այդ դիմումը չի ներկայացվել բռնության, սպառնալիքի, խաբեության կամ այլ հարկադրանքի արդյունքում:

Հոդված 26. Ընտանեկան բռնությունը կանխարգելող հատուկ միջոցների կիրառումը դադարեցնելու հիմքերը

1. Ընտանեկան բռնությունը կանխարգելող հատուկ միջոցների կիրառումը դադարեցվում է, եթե՝

1) ընտանեկան բռնության զոհը խոչընդոտում է իր կողմից ներկայացված տեղեկությունների ստուգմանը և (կամ) ընտանեկան բռնությունը կանխարգելելու հատուկ միջոցների կիրառմանը,

2) իրավիճակի փոփոխության հետևանքով ընտանեկան բռնության զոհին դադարել է սպառնալ ընտանեկան բռնության իրական վտանգ և (կամ) առկա է օրինական ուժի մեջ մտած դատական ակտն առ այն, որ տվյալ անձի իրավունքների և ազատությունների խախտում տեղի չի ունեցել կամ դրանք վերականգնվել են,

3) ընտանեկան բռնության զոհի կամ նրա օրինական ներկայացուցչի կողմից կեղծ տեղեկություններ են ներկայացվել ընտանեկան բռնության մասին,

4) ընտանեկան բռնության զոհը դիմում է ներկայացրել ընտանեկան բռնությունը կանխարգելելու հատուկ միջոցների կիրառումից հրաժարվելու մասին՝ այն պայմանով, որ այդ դիմումը չի ներկայացվել բռնության, սպառնալիքի, խաբեության կամ այլ հարկադրանքի արդյունքում:

2. Սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված հիմքերի առկայության դեպքում ընտանեկան բռնության զոհը կամ նրա օրինական ներկայացուցիչը օրենքով սահմանված կարգով ենթարկվում է պատասխանատվության:

Հոդված 27. Ընտանեկան բռնությունը կանխարգելող հատուկ միջոցների կիրառման հետ կապված որոշումների բողոքարկումը

Ընտանկան բռնությունը կանխարգելող հատուկ միջոցների ընդունման, կիրառման և դադարեցման որոշումները շահագրգիռ անձանց կողմից կարող են բողոքարկվել դատական կարգով՝ մեկամսյա ժամկետում:

ԳԼՈՒԽ 5. ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԶՈՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՎԱԾՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

Հոդված 28. Ընտանեկան բռնության զոհի սոցիալական աջակցությունը

Ընտանեկան բռնության զոհը, հանդիսանալով կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձ, օգտվում է <Սոցիալական աջակցության մասին> Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված աջակցությունից:

Հոդված 29. Անցումային կացարանային նպաստ

1. Մշտական բնակության վայր կամ այն վարձելու համար բավարար եկամուտ չունենալու դեպքում ապաստարանից դուրս գալու պահից ընտանեկան բռնության զոհին տրամադրվում է անցումային կացարանային նպաստ: Անցումային կացարանային նպաստը վճարվում է ընտանեկան բռնության զոհերի վերականգնման հիմնադրամի կողմից և նախատեսված է ապաստարանից դուրս գալուց հետո 6 ամսվա ընթացքում ընտանեկան բռնության զոհի բնակարանային վարձը և (կամ) կոմունալ վճարումները հատուցելու համար:

2. Անցումային կացարանային նպաստի չափը և վճարման կարգը, ինչպես նաև ընտանեկան բռնության զոհին այն վճարման անհրաժեշտության մասին որոշում կայացնելու չափանիշները սահմանվում են Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից:

3. Ընտանեկան բռնության զոհին անցումային կացարանային նպաստի վճարման անհրաժեշտության մասին որոշումը ընդունում է ընտանեկան բռնության զոհերի վերականգնման հիմնադրամի երեք մասնագետներից կազմված գնահատման խումբը:

Հոդված 30. Աշխատանքի տեղավորման և մասնագիտական ուսուցման աջակցություն

1. Ապաստարանները և խորհրդատվական կենտրոնները, համագործակցելով զբաղվածության ծառայությունների հետ, ըստ պահանջի կազմակերպում են մասնագիտական ուսուցման և/կամ վերապատրաստման դասընթացներ՝ զոհերին աշխատանքի տեղավորման աջակցման նպատակով:

2. Ապաստարանները և խորհրդատվական կենտրոններն իրականացնում են ընտանեկան բռնության զոհերի աշխատանքի տեղավորման աջակցման ծրագրեր:

ԳԼՈՒԽ 6. ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ

Հոդված 31. Գաղտնիության ապահովման և տեղեկությունների տրամադրման կարգը

1. Դատարանի որոշմամբ ընտանեկան բռնությունը կանխարգելող հատուկ միջոցների կիրառման վերաբերյալ գործերով կարող է անցկացվել դռնփակ դատական քննություն՝ օրենսդրությամբ նախատեսված հիմքերով և դեպքերում:

2. Արգելվում է հրապարակել, այդ թվում՝ նաև ընտանեկան բռնության զոհերի, նրանց երեխաների և (կամ) նրանց խնամքի տակ գտնվող անձանց կողմից, խորհրդատվական կենտրոնի, ապաստարանի հասցեն կամ այլ տեղեկություն, որի միջոցով հնարավոր է հայտնաբերել դրանց գտնվելու վայրը:

3. Արգելվում է սույն օրենքի 5-րդ հոդվածում նշված մարմինների պաշտոնատար անձանց և աշխատակիցներին՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի, բացահայտել անձին նույնականացնող տեղեկություններ, որոնք նրանց հայտնի են դարձել իրենց ծառայողական կամ աշխատանքային պարտականությունները կատարելիս և վերաբերում են ընտանեկան բռնության զոհերին, նրանց ընտանիքի անդամներին կամ այն անձանց, ում գրավոր կամ բանավոր հաղորդման հիման վրա կիրառվում են ընտանեկան բռնությունը կանխարգելող հատուկ միջոցներ:

4. Արգելվում է հրապարակել ընտանեկան բռնություն կատարած անձանց պրոֆիլակտիկ հաշվառման վերցնելու և հաշվառումից հանելու վերաբերյալ տվյալները՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի:

5. Ընտանեկան բռնության զոհի և խորհրդատվական կենտրոնի, ապաստարանի միջև հաղորդումները գաղտնի են և կարող են հրապարակվել միայն Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերում կամ ընտանեկան բռնության զոհի համաձայնությամբ:

ԳԼՈՒԽ 7. ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԶՈՀԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԸ

Հոդված 32. Ընտանեկան բռնության զոհերի վերականգնման հիմնադրամը

1. Ընտանեկան բռնության զոհերի վերականգնման հիմնադրամը հիմնադրվում է ապաստարանների և խորհրդատվական կենտրոնների ընթացիկ ծախսերը մասնակի ֆինանսավորելու և ընտանեկան բռնության զոհերին անցումային աջակցություն ցուցաբերելու նպատակով:

2. Ընտանեկան բռնության զոհերի վերականգնման հիմնադրամի ստեղծման, կառավարման մարմինների, կանոնադրության, հիմնադրամի և վերջինիս կառավարման մարմինների իրավունքների և պարտականությունների, հիմնադրամի

լուծարման և այլ հարաբերությունները կարգավորվում են «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

Հոդված 33. Ընտանեկան բռնության զոհերի վերականգնման հիմնադրամի միջոցները

Ընտանեկան բռնության զոհերի վերականգնման հիմնադրամի միջոցները ձևավորվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից, ֆիզիկական և իրավաբանական անձանց նվիրատվություններից և օրենքով չարգելված այլ աղբյուրներից ստացվող միջոցներից:

ԳԼՈՒԽ 8. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 34. Օրենքի ուժի մեջ մտնելը

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: